

ԶԱՊԵԼ ԵՄԱՅԱՆ

Գրական-հասարակական առումով աշխույժ ու եռանդալից կյանքով ապրեց սովետահայ արձակագիր, մշակութային գործիչ, ֆրանսերենից-հայերեն և հայերենից-ֆրանսերեն գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանիչ Զապել Եսայանը: Ծնվելով Պոլսում, 1878 թ. փետրվարի 4-ին, աղքատացած ազնվական Մկրտիչ Հովհաննիսյանի ոչ բազմանդամ ընտանիքում, սկզբնական կրթությունն ստանալով իր ծննդավայրի «Սուրբ Խաչ» հայկական ազգային վարժարանում, ապա՝ Փարիզի հանրաճանաչ «Կոլեժ դը Ֆրանս» հումանիտար թեքումով դպրոցում, որից հետո Սորբոնում, Եսայանը կարողացավ հիմնավորապես ծանոթանալ և քննադատաբար յուրացնել այն ամենը, ինչ գեղարվեստական գրականության ասպարեզում ստեղծել էր հայկական և եվրոպական առաջադեմ միտքը: Եսայանի գրական ուսուցիչները եղան Պետրոս Դուրյանն ու Բաֆֆին, Սրբուհի Տյուսաբն ու Բալզակը, Գրիգոր Ջոհրայան ու Ֆլոբերը, Թումանյանը, Իսահակյանն ու Սոպասանը, Միսաք Մեծարենցը, Վարուժանն ու Միամանթոն, ում նա կարդում էր անհագ ու անդադրում և, որ արդեն ուշագրավ էր, փորձում էր ստեղծագործել նրանց ոճով ու ոգով: Արդեն հասունացած, գրական-հասարակական և հրապարակախոսական պատկառագործ ճանապարհ անցած գրող էր Զապել Եսայանը, երբ 1926 թվականին առաջին անգամ այցելեց Խորհրդային Հայաստան, իր աչքով տեսավ բռնություններից ու կոտորածներից մազապուրծ հայ ժողովրդի օրավուր բարգավաճումը, իսկ 1933թ. գարնանը վերջնականապես հաստատվեց Երևանում: Ավագ սերնդին պատկանող սովետահայ գրողներն ու գործիչները մինչև այսօր էլ հիշում են փոքր-ինչ գիրուկ, եռանդալից շարժումներով ու վճռական, համարձակ պահվածքով Զապել Եսայանին, որն ուղղամիտ ու անկողմնակալ ելույթներով բազմիցս հանդես էր գալիս Գրողների միության կազմակերպած գրական բանավեճերում՝ այս կամ այն գեղարվեստական ստեղծագործության քննարկման ժամանակ, կամ գրականության հետ առնչվող որևէ անկյունաքարային հարցի շուրջ ծավալված մտքերի փոխանակությունում: Այս առումով ուշագրավ է 1936 թ. ապրիլի 26-28-ի Հայաստանի Սովետական Գրողների միությունում կայացած գրական դիսպուտում Զապել Եսայանի ընդարձակ ելույթը, որտեղ նա, իրեն բնորոշ շիտակությամբ բարձրացնում էր գրողի և ժամանակի կապի, թեմատիկայի արդիականության ու հեղինակային վերաբերմունքի, սովետահայ գրականության զարգացման հետագայի հետ կապվող մի շարք կարևոր հարցեր:

Ինչպես և սպասելի էր, Դուրյանով, Մեծարենցով ու Բողլերով իր միտքը դաստիարակած երիտասարդ աղջնակը, գրական բեմելը պետք է սկսեր բանաստեղծություններով: Հայերեն, իսկ ավելի շատ ֆրանսերեն լեզուներով գրված նրա ստեղծագործությունները, որոնք հրատարակվում էին «Մերկուր դը Ֆրանս», «Մասիս», «Յումանիտե նուվել», «Անահիտ», «Էկրիտ պուր լ'Արտ», «Ծաղիկ» և բազում այլ պարբերականներում, մեկից արժանացան ընթերցող և գիտական հասարակայնության ուշադրությանը: Հայալեզու ստեղծագործությունները դրվատեց գրականագետ Արշակ Չոպանյանը, որն, ի դեպ, «Օրվա հերոսուհին» տերմինով որակեց նրան, իսկ ֆրանսերեն բանաստեղծությունները՝ ֆրանսիացի մեկից ավելի նշանավոր քննադատներ: Ոգևորված այս ընդունելությունից, Եսայանը աստիճանաբար հրապարակ հանեց «Սկյուտարի վերջալույսներ» (1905թ.), «Կեղծ հանճարներ» (նույն թվականին), «Հլուները և ըմբոստները» (1906 թ.), «Շնորհքով մարդիկ» (1907 թ.) և այլ վեպեր, բազմաթիվ մեծ ու փոքր ակնարկներ ու նովելներ,

հայկական իրականության պայմաններում հիմնադիրը հանդիսանալով Եվրոպայում տարածված գեղարվեստական ստեղծագործության այն տեսակին, որը հայտնի է «հոգեբանական վեպ» անունով: Գեղարվեստական արձակին անցնելն էլ պայմանավորված էր հոգեբանական վեպին բնորոշ ներքին օրինչափությունները ավելի որոշակի արտահայտել կարողանալու թելադրությամբ, քանզի բանաստեղծական սեղմ ձևը այդ անելու հնարավորությունը չէր տալիս: Եվ այստեղ էլ գրողի արդյունքները անառարկելի եղան:

Եսայանի ուշադրության կենտրոնում նախ և առաջ մարդու ներաշխարհն է, նրա հոգեբանությունը և այդ հոգեբանության այլևայլ դրսևորումները հասարակական կյանքում: Դրանից է կախված թե՛ նրա վարքագիծը այն միջավայրում, ուր ապրում ու գործում է, թե՛ մտածողության նրա ամբողջ համակարգի՝ այս կամ այն արտահայտության որակային առանձնահատկությունը, թե՛ վերջապես, նրա՝ իբրև անհատի բարոյա-ազգային նկարագիրը: Թե՛ Տաճատ Չաքրըյանը, թե՛ Հակոբը, Պետիկն ու Տիրանը, թե՛ Սարգիս և Միսաք էֆենդիները, որոն հանդիսանում են վերոհիշյալ վեպերի՝ հեղինակի գաղափարակիր-կերպարները, ապրում և գործում են բացառապես այդ օրինաչափությունների թելադրությամբ: Հեղինակն այս առումով կատարում է բարդ ու նուրբ հոգեբանական հետախուզումներ՝ բացահայտելով այն ներդաշնակությունները, որոնք օրինաչափորեն նկատվում են մարդկային ներքին էության և բնության միջև, մեկը բացատրում է մյուսով և մեկնաբանում նրա օգնությամբ, և միաժամանակ նուրբ գեղագետին վայել խորաթափանցությամբ ցույց է տալիս այն ակնհայտ ողբերգական հակասությունները, որոնք գոյություն ունեն մարդու ձգտումների և անողոր իրականության միջև:

1910-ական թվականներից սկսած, իրեն հայ գրականության անդաստանում վերջնականապես հաստատած Ջապել Եսայանի գրիչը դուր ու դադար չի ունենում: Իրար են հաջորդում նովելները, քրոնիկները, հրապարակախոսական հոդվածները, վեպերն ու վիպակները, թարգմանությունները, հուշապատումները: Դրանցից «Ձայներ որբերու թշվառութենեն», «Աղետի գոհերեն», «Խնդրանք ակնեցինարուն» արձակ ստեղծագործությունները, որտեղ պատկերված են Կիլիկիայի ջարդերն ու ջարդարարների՝ անզեն հայ ժողովրդի վերաբերյալ կատարած սանձարձակությունները, «Ժողովուրդի մը հոգեվարքը» և «Մուրատի ճամբորդությունը» վեպ-հուշագրությունները նվիրված են 1915 թ. հայ ժողովրդի ցեղասպանությանը, համազգային մի աղետ, որին ի դեպ, քիչ մնաց զոհ գնար նաև ինքը, «Վերջին բաժակը», «Հոգիս աքսորյալ» վիպակները, որտեղ հեղինակը քննում է քաղաքական և սոցիալական անարդարությունները ծնող պատճառները և այդ հենքի վրա պայքարի դրոշ պարզում դրանց դեմ, – մեր գրականության ուշագրավ երևույթներից են և իրենց նկատմամբ հետաքրքրությունը չեն կորցրել առ այսօր:

Պակաս բեղմնավոր չեղավ Ջապել Եսայանի՝ թե՛ հասարակական, և թե՛ գրական գործունեությունը այն տարիներին, երբ նա հաստատվեց Խորհրդային Հայաստանում, ավելի ճիշտ՝ Երևանում: 1933 թ. սեպտեմբերին, այսինքն՝ Մայր Հայրենիքում հանգրվանելուց հազիվ մի քանի ամիս անց, նա սկսում է ֆրանսերեն գրականություն դասավանդել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, իսկ մի տարի հետո՝ 1934 թվականին, հաշվի առնելով գրականությանը մատուցած նրա անուրանալի ծառայությունները, ընտրվում է ՍՍՀՄ

գրողների միության անդամ: Նույն թվականին Եսայանը, սովետահայ գրականության մի քանի ներկայացուցիչների հետ, որպես պատգամավոր մասնակցում է Սովետական գրողների միության առաջին համագումարին, որն, ինչպես հայտնի է, տեղի ունեցավ Մոսկվայում, օգոստոսի 17-ից մինչև սեպտեմբերի 1-ը, և որտեղ հիմնական զեկուցողը Մաքսիմ Գորկին էր: Գորկուց հետո ամբիոն բարձրանալով, Եսայանը ֆրանսերեն արտասանած իր ելույթում, ամբողջ սրությամբ դրեց գրականության սոցիալական դերի հարցը, ցույց տվեց, որ հասարակական կյանքի ներկա էտապում գրողը չի կարող չեզոք դիրք գրավել կամ ապահովագրել իրեն «հեռվից տեսնելու», «տեսնելու, նոր համոզվելու», «նախ ուրիշները և նոր միայն ես» և այս կարգի այլ անընդունելի կարգախոսներով: Նույն՝ 1934 թվականին, վերջապես, Եսայանը Եղիշե Չարենցի, Դերենիկ Դեմիրճյանի և Միքայել Մանվելյանի հետ ընտրվում է Երևանի քաղաքային խորհրդի կազմում և այստեղ էլ հիանալի է դրսևորում իրեն: Չմոռանանք նաև, որ հենց այս ժամանակաշրջանում հայ աշխատավորների մոտ նա սկսում է հանդես գալ եվրոպական և հայ գրականությանը նվիրված բազում-բազմաթիվ զեկուցումներով:

Նույն եռանդն էր դրսևորում Եսայանը նաև գրականության բնագավառում: 1934 թ. Երևանում հրատարակվում է նրա «Կրակե շապիկ» վիպակը, որը երկու տարի անց, 1936-ին թարգմանվում է ռուսերեն, իսկ մի տարի հետո՝ ադրբեջաներեն: 1935-ին լույս է տեսնում «Միլիտարի պարտեզները» վեպ-հուշագրության առաջին հատորը, այն ժամանակվա աննախադեպ՝ չորս հազար տպաքանակով: 1936-ին Եսայանն ավարտում է իր կոթողային աշխատանքը՝ «Բարպա Խաչիկ» վեպը, որը բաղկացած էր մի քանի հազար ձեռագիր էջերից, և որից մամուլում տպագրվեցին որոշ հատվածներ: 1937 թվականին վերջապես հրատարակվում է նրա մանրակտավ ստեղծագործությունների ծավալուն ժողովածուն, «Երկիր» խորագրով և այլն: Այս բոլորի մեջ, սակայն, ուրույն ձևով առանձնանում է «Բարպա Խաչիկ» վեպը, որը հրատարակվեց հեղինակի մահվանից հետո, 1966 թ. Երևանում:

Եսայանը բավականին ինքնատիպ ձև է ընտրել իր վեպի սյուժետային կառուցվածքի համար: Նրա հերոսները՝ Միհրանն ու իր բարեկամ Բարպա Խաչիկը ծնունդով պոլսեցիներ են և, հասկանալի է, հիանալի գիտեն իրենց ծննդավայրը: Հասարակական-քաղաքական այլևայլ դեպքերի բերումով, նրանք փոխադրվում են Փարիզ, որից հետո՝ Խորհրդային Հայաստան և հանգամանորեն ծանոթանում են այս երկրներին էլ: Հասարակական-քաղաքական տեսակետից միանգամայն տարբեր իրավիճակների արգասիք հանդիսացող այս երկրների համադրական վերլուծության հենքի վրա էլ հեղինակը ստեղծել է իր վեպը, անելով իր ուշագրավ, հաճախ էլ համարձակ, եզրակացությունները: Իհարկե, Եսայանը չի հարձակվում Պոլսի կամ Փարիզի վրա, նրանց չի դիտում որպես անհույս չարիքի և անհեռատես խավարամոլության բիրտ օջախներ, իսկ Մայր Հայրենիքը՝ մի տեսակ սրբություն սրբոց կամ ճշմարտության ու արդար բանականության մի կատարյալ ամբողջականություն: Այսպիսի մոտեցումը, ինչ խոսք, մեծապես կիջեցներ վեպի գաղափարական արժեքը և կնսեմացներ նրա ճանաչողական նշանակությունը: Բայց գեղարվեստորեն վերարտադրելով այդ երկրների մշակութային, գրական, հասարակական կյանքը, հեղինակն իր ընթերցողին, ի վերջո, բերում է այն աներկմիտ համոզմանը, որ ինչքան էլ գեղեցիկ ու բանական լինեն դրանք, հայի համար իր փրկության հանգրվանը միայն իր պապենական հայրենիքն է, իր Մայր Հայաստանը: Այս է «Բարպա Խաչիկի» գաղափարական

առանցքը և հեղինակը կարողացել է առանցքային այս դրույթը գեղարվեստորեն մարմնավորել առավել քան հստակ ձևով:

Քիչ ապրեց Ջապել Եսայանը. քիչ ավելի, քան վաթսուն տարի: Սակայն նրա ստեղծած գրական ժառանգությունը, որն ավելի է տաս-տասներկու հատորից, իր լավագույն մասով արդեն ապահովել է իր տեղը հայ գրականության ոսկե ֆոնդում, դառնալով նրա անկապտելի սեփականությունը: Եվ երախտագետ հայ ժողովուրդը, նշելով իր անվանի դստեր մահվան տարեդարձը, արժանին է հատուցում արժանավորին, նրա համար կրկնելով «Բարպա Խաչիկի» վեպի հերոսներից մեկի խոսքերը. «Ինչ արել եմ՝ արել եմ հոգուտ սիրելի ազգիս ու հայրենիքիս: Լավ է՝ վերցրեք ինչքան և ինչպես կուզեք, վատի համար՝ ներեցեք»:

Հաղորդվել է 1988 թ. սկզբներին,

«Արտասահմանյան հաղորդումների բաժնի» շրջանակներում